

<https://doi.org/10.46991/hc.2025.22.1.033>

From the History of the Armenian Notation

Diana Hakobyan

<https://orcid.org/0009-0006-5239-068X>

YSU Faculty of History, PhD Student

Leading Archivist of the National Archives of Armenia's Department of the Archival Collection

Formation

d.n11@mail.ru

Keywords: writing, symbolic script codex (“nshanagir imastnots”),
History of Armenia, historical period,
culture, manuscript codices.

The article aims at presenting the historical development and scholarly exploration of the Armenian symbolic writing systems. It becomes evident throughout the article that the historiography of symbolic writing has remained notably under-researched.

The principal conclusion of the study is that the Symbolic Script Codex (“nshanagir imastnots”) has not vanished from the annals of history, yet it has not been subjected to in-depth academic scrutiny and scholarly inquiry. Only a few scholars, namely A. Abrahamyan and H. Acharian, have approached the subject with genuine academic rigor, whereas others have neglected to examine it through a consistent methodological framework.

The relevance of this article is underscored by its applicability to several unresolved historical and political issues, particularly as documentary evidence in the fight against cultural plunder. In the modern era, distortions and falsifications of Armenian history have intensified. Countering this phenomenon requires not only the publication of academic studies, but also the revelation and reexamination of historical facts and primary sources that have survived from antiquity.

To ensure the purposefulness of the research, primary historical sources authored by chroniclers and data from previous academic investigations were examined. The study was grounded in rare manuscript codices from the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran), with special focus on symbolic scripts recorded by medieval scribes. Based on central archival catalogues, 52 manuscript codices containing symbolic scripts were identified and registered.

Armenian symbolic writing constitutes one of the essential components of the Armenian nation's cultural heritage, with origins traceable to the pre-alphabetic era. This writing system, which has

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 33-44



Received: 12.06.2025

Revised: 13.08.2025

Accepted: 15.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

undergone transformations and reformulations over time, has fulfilled communicative, ritualistic, ceremonial, and cultural functions. The article examines the historical foundations of symbolic script emergence, their usage across various historical epochs, and their influence on the later development of the Armenian writing system. Special attention is devoted to the application of symbolic writing in religious and ceremonial contexts and its role in the preservation and transmission of national identity. The study reveals that although symbolic writing was ultimately replaced by the alphabet devised by Mesrop Mashtots, it continues to constitute a significant component of the Armenian cultural legacy and remains a subject worthy of renewed scholarly attention and analysis.

Հայերեն նշանագրության պատմությունից

Դիանա Հակոբյան

ԵՊՀ. Պատմության ֆակուլտետ, հայցորդ

ԱԱ արխիվային հավաքածուի ձևավորման բաժնի առաջատար արխիվագետ,

Հիմնաբառեր՝ գիր, նշանագիրք իմաստնոց,
Պատմութիւն հայոց, պատմական ժամանակաշրջան,
մշակույթ, ձեռագիր-մատյաններ:

Հոդվածի նպատակն է ներկայացնել նշանագրության պատմության զարգացման և ուսումնասիրության ընթացքը: Հոդվածում ակնհայտ երևում է, որ բավական քիչ է ուսումնասիրված գրանշանային պատմությունը:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ պատմության երից չի վերացել նշանագիրք իմաստնոցը, սակայն խորաքնին չի ուսումնասիրվել: Հարցին լրջորեն մոտեցել են Ա. Աբրահամյանն ու Հ. Աճառյանը, իսկ այլ գիտնականներ պարզապես մեթոդական քննության չեն ենթարկել:

Հոդվածը՝ որպես ապացույց, արդիական է պատմաքաղաքական մի շարք չլուծված հարցերի, հատկապես «մշակութային կոդոպոտի» դեմ պայքարելու համար: Արդի ժամանակաշրջանում խորացել են հայոց պատմության խեղաթյուրումն ու զեղծարարությունը, որոնց դեմ պայքարելը պետք է իրականացնել՝ ոչ միայն գրելով գիտական աշխատանքներ, այլև բացահայտել հնագույն ժամանակներից մեզ հասած պատմական փաստերն ու աղբյուրները:

Հետազոտությունը նպատակային դարձնելու համար ուսումնասիրել և օգտվել ենք պատմիչների սկզբնաղբյուրներից, գիտնականների հետազոտական ուսումնասիրության տվյալներից, հետազոտության հիմք ենք դարձրել Մաշտոցի անվան Մատենադարանի հնատիպ ձեռագիր-մատյանները, որոնցում ուսումնասիրել ենք միջնադարյան գրիչների կողմից գրի առնված նշանագրերը: Մայր ցուցակներից գրի ենք առել 52 ձեռագիր-մատյանների համարներ, որոնցում առկա են նշանագրեր:

Հայերեն նշանագրությունը հայ ժողովրդի մշակութային ժառանգության կարևորագույն բաղադրիչներից է, որի ակունքները հասնում են նախագրային շրջանին: Այս համակարգը, որը

Ժամանակի ընթացքում կրել է փոփոխություններ և վերաձևակերպումներ, ունեցել է ինչպես հաղորդակցական, այնպես էլ պաշտամունքային, ծիսական ու մշակութային նշանակություն: Հոդվածում քննվում են նշանագրերի առաջացման պատմական հիմքերը, դրանց կիրառությունը տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես նաև դրանց ազդեցությունը հայերեն գրային համակարգի հետագա ձևավորման վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում նշանագրերի կիրառմանը կրոնական ու պաշտամունքային ոլորտներում, ինչպես նաև դրանց դերին ազգի ինքնության պահպանման և փոխանցման գործընթացում: Ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ հայերեն նշանագրերը, չնայած իրենց փոխարինմանը Մեսրոպ Մաշտոցի այբուբենով, շարունակում են մնալ կարևոր մաս հայ ժողովրդի մշակութային ժառանգության մեջ՝ արժանանալով նոր ուսումնասիրությունների ու վերլուծությունների:

Из истории армянских письменных символов

Диана Акопян

ЕГУ, Исторический факультет, соискатель

Ведущий архивовед отдела формирования архивных фондов Национального архива Армении

Ключевые слова: письменность, книга мудрости
(«Ншанагирк имаство»), История Армении,
исторический период, культура, рукописные книги.

Цель статьи — представить развитие и ход изучения истории армянского иероглифа. В статье явно подчеркивается, что история иероглифа является недостаточно изученной.

Основной вывод исследования заключается в том, что система знаков как смысловое явление не исчезла со страниц истории, однако она не была подвергнута глубокому изучению. К вопросу серьезно подходили лишь А. Абраамян и Г. Ачарян, в то время как остальные учёные не проводили методологического анализа.

Актуальность статьи определяется рядом нерешённых историко-политических вопросов, особенно в контексте борьбы с «культурным грабежом». В современный период всё более искажается и фальсифицируется история Армении, и противодействие этому должно осуществляться не только посредством научных трудов, но и путём выявления исторических фактов и источников, дошедших до нас с древнейших времён.

Для целенаправленности исследования были изучены первоисточники армянских историков, использованы данные научных исследований, в основу работы легли древние рукописные книги из Матенадарана имени Маштоца, в которых исследовались знаки, записанные средневековыми писцами. Из основных каталогов были зафиксированы 52 рукописей, содержащие иероглифы.

Армянская знаковая система является одной из важнейших составляющих культурного наследия армянского народа, истоки которой уходят в дописьменный период. Эта система, подвергавшаяся изменениям и переосмыслению с течением времени, имела как коммуникативное,

так и культовое, ритуальное и культурное значение. В статье рассматриваются исторические предпосылки возникновения знаков, их применение в разные эпохи, а также влияние на дальнейшее формирование армянской письменности. Особое внимание уделяется использованию знаков в религиозной и культовой сферах, а также их роли в сохранении и передаче национальной идентичности. В результате исследования выясняется, что, несмотря на замену алфавитом Месропа Маштоца, армянские знаки продолжают оставаться важной частью культурного наследия армянского народа, заслуживая новых исследований и анализа.

* * *

Ներածություն: Հոդվածի նպատակն է ներկայացնել նշանագրության պատմության զարգացման և ուսումնասիրության ընթացքը, որը բավական քիչ է ուսումնասիրված և դեռևս կարոտ է լուրջ հետազոտության:

Հարցին լրջորեն են մոտեցել Ա. Աբրահամյան ու Հ. Աճառյանը, իսկ մնացած գիտնականները, որոնց մասին խոսում ենք ստորև, անդրադարձել են առանց մեթոդական քննության ենթարկելու:

Հետազոտությունը նպատակային դարձնելու համար ուսումնասիրել և օգտվել ենք պատմիչների սկզբնաղբյուրներից, գիտնականների հետազոտական ուսումնասիրության տվյալներից, հետազոտության հիմք ենք դարձրել Մաշտոցի անվան Մատենդարանի ձեռագիր-մատյանները, որոնցում ուսումնասիրել ենք միջնադարյան գրիչների կողմից գրի առած նշանագրերը:

Առանձնացրել ենք 52 ձեռագիր-մատյաններ, որոնցում առկա են նշանագրեր:

Գրի՝ որպես հասարակական հաղորդակցման միջոցի առաջացումը և զարգացումը սերտորեն կապված է հասարակության պատմության հետ: Հասարակական կյանքի զարգացման հետ գիրը կամ գրային համակարգը հանդես է գալիս ոչ միայն հաղորդակցման միջոց, այլև որպես մշակույթի և գիտության զարգացման հզոր գործոններից մեկը [Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 2010, 104]:

IV դարի վերջին Հայաստանը կանգնում է տնտեսական, քաղաքական ու մշակութային բռնաճնշման առաջ, որի պատճառով 387թ. բաժանվում է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Ակնհայտ է, որ քրիստոնեության ընդունումը լիակատար չի փրկում հայ ժողովրդին կործանման ճանապարհից, քանի որ հայերը օգտվում էին օտար ազգերի լեզվամշակույթից՝ պարսկերենից, արամեերենից, ասորերենից և հունարենից: Հայաստանը և հայ ժողովրդին փրկելու նպատակով՝ Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ 405թ. ստեղծվում են հայոց գրերը: Սակայն հարց է առաջանում, արդյո՞ք, հնարավոր է ունենալ հնագույն պատմություն, բայց չունենալ լեզվամշակույթ: Նման հարցի առաջացման համար հիմք է համարվում, նաև այն, որ նախնադարյան ժամանակներից մեզ են հասել զանազան ժայռապատկերներ, որոնք նույնպես համարվում են մտքի, խոսքի փոխանակում կամ տեղեկատվության հաղորդում:

Գիրը խթան է հանդիսանում պատմության պահպանման, տեղեկատվության փոխանցման և քաղաքակրթության զարգացման համար, հետևաբար հայ ժողովուրդը, ունենալով մոտ 3000 տարվա պատմություն չէր կարող չունենալ գրային համակարգ: Դրա վաղ ապացույցն է ձեռագիր-մատյաններում առկա գրանշանները, որոնք ներկայացված են՝ «Նշանագիրք իմաստնոց»,

«Նշանագիր այբուբենից», «Նշանագիր» և այլ նմանատիպ անուններով: Դրանք գաղափարագրեր են, որոնք առաջին անգամ ներկայացրել է Մխիթար Սեբաստացին իր «Քերականութիւն գրաբանի լեզուի հայկազեան սեռի» գրքում: Սեբաստացին նշում է, որ հնում նախնիները ավելի վարժ և սովոր էին նման նշաններ գրելուն: Իրենք կարճ վանկերը ամբողջական էին գրում, սակայն կրճատում էին երկար վանկերը, նայա ամենից բացի մտածել էին նշաններ, որոնք փոխարինում էին ամբողջական բառերին. «Նշանագիրն է գիծ ինչ որ հնարեցեալ է առ ՚ի դնիլ փոխանակ միոյ բոլորի բանի....» [Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբանի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730]:

Ըստ Սեբաստացու պահպանված նշանագրերը թվով 84 են, սակայն իր քերականական գրքում, նշանագրերից բացի ներկայացնում է նաև կրճատագրություն, օրինակ՝ հ-հարց, ճ-ճանապարհ, մաղ-մաղթանք, ժկ-ժամանակ, կ-կամ և այլն [Մխիթար Սեբաստացի, նույն տեղում, 482]:

Այնուհետև Միքայել Չամչյանը իր «Պատմութիւն հայոց»-ում՝ պատմելով գրերի գյուտի մասին, լրացնում է. «...այսք ամի մարթ է ասել՝ թե այն գիրք գուցէ չէին հատուկ տառք, այլ՝ նշանագիրք ինչ, որք հնարեալ էին փոխանակ ամբողջ բանից...կան և այժմ ի հին ձեռագիրս...» [Միքայել Չամչյան, Հայոց պատմություն, Ա հտ., Երևան, 1985, 761]:

Հաջորդ հետաքրքիր ուսումնասիրությունը կատարել է Գարեգին Սրվանձտեանցը իր «Թորոս աղբար» օրագիր-գրքում, որում նկարագրում է, թե ինչպես է 1878թ. Ներսես Սրբազան Պատրիարքը գործուղման ուղարկում երեք վարդապետների, որոնցից մեկը Գարեգին Սրվանձտեանցն է: Սրվանձտեանցը հենց այդ գործուղման ժամանակ գրի է առնում Տիգրանակերտի Նշանագիրք հայոցը, որը բաղկացած 120 նշաններից [Գ. Սրվանձտեանց, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1879, է (7)]:

Խորաքնին ուսումնասիրություն է կատարել Մ. Էմինը. նա բացատրել է, որ հայ ժողովուրդը ունենալով սեփական մշակույթ, բոլոր ժամանակներում իր հոգևոր արժեքները ընկալել է երկու ճյուղով, այսինքն՝ մի մասը հակված էր պարսկական ոճին կամ գտնվել է պարսկական մշակույթի ազդեցության ներքո, իսկ մյուսը՝ հունականության կամ հելլենիզմի [Մ. Эмин, Изселодования, выпуск II, Москва, 1896, стр. 206]: Նման ձևով էլ զարգացել է հայերենի գրային համակարգը, ահա այսպես, առաջին տեղում նշաններն են կամ նշանագիրքը, իսկ երկրորդ տեղում են այսպես կոչված գիրը կամ գրային համակարգը: Ուշագրավ է այն, որ Էմինը այդ նշաններին անվանում է նաև հիերոգլիֆներ, ասելով որ այդ նշաններիկամ նշանագրերի մասին տեղեկցվել է միայն Ագաթանգոսի «Պատմութիւն հայոց»-ից և ոչ մի տեղ էլ չի հանդիպել [Մ. Эмин, там же, стр. 209]:

Ահա թե ինչ է գրել Ագաթանգեղոսը իր «Պատմութիւն հայոց»-ում. «....ումն Ագաթանգեղոս, որ ի քաղաքէ, ի մեծն Հռոմայ և վարժեալ հայերենի արուեստիւ, հոռոմարէն և յունարէն ուսեալ դպրութիւն և ոչինչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց» [Ագաթանգեղեայ, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 15: (Տե՛ս նաև Ագաթանգեղեայ, Պատմութիւն հայոց, Երևան, 1983, 16)]:

Այսինքն՝ ստացվում է, որ նշանագրերի մասին հիշատակել է նաև Ագաթանգեղոսը, բայց առաջին անգամ մեկնաբանել է Սեբաստացին, իսկ առավել մանրամասն քննությունն է կատարել Մ. Էմինը:

Հայկական նշանագրերի գիտահետազոտական ուսումնասիրություն է կատարել Ի. Հարությունյանը, ով քննության ընթացքում հակասել է Էմինի տեսակետին. ըստ Մ. Էմինի հայկական նշանագրերն ունեն նախամաշտոցյան ծագում: Ի. Հարությունյանը կարծում է, որ այդ նշանները մեհենագրության հետ ոչ մի առնչություն չունեն, քանի որ նշանախմբում կան քրիստոնեական գաղափարներն էր կայացնող նշաններ, օրինակ՝ խաչ, եկեղեցի, Աբրահամ և այլն, որոշ նշաններ փոխառված են ուշ ժամանակաշրջանում՝ հարևան ժողովուրդներից, և ամենակարևոր փաստերից է նաև այն, որ նշաններից շատերը վերցված են հայոց այբուբենից կամ մեսրոպյան այբուբենից [Ի. Յարութինեանց, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, 107]: Այնուհետև Ի. Հարությունյանը հավելում է, որ դժվար է դրական պատասխան տալ այն հարցին՝ արդյո՞ք նշանագրերը նախաքրիստոնեական են, թե ոչ. («Նոյնիսկ մեր առաջը դրված այդ ժողովածուի գոյությունը չի կարող համոզել մեզ, այդ հարցերին դրական պատասխան տալ... Շատ պարզ կերպիւ. դոքա յառաջացել են սակաւ առ սակաւ ժամանակի ընթացքում՝ ձեռագրերի արտագրողներին մի փոքր դիւրութիւն մատուցանելու համար: Այդ նշանների մեծ մասը ոչ այլ ինչ է, եթե ոչ արհեստական համառոտագրութիւն...») [Ի. Յարութինյանց, նույն տեղում, 108-109]: Ապա հավելում է՝ մնացած նշանները առաջացել են կա՛մ Մեսրոպ Մաշտոցից հետո, կա՛մ հայերի մեջ տարածված և գործածական դարձած տառագրության շրջանում:

Հաջորդ ուսումնասիրությունը իրականացրել է Պալյանը [Տ. Պալեան, Նշանագիրք հայոց, Վիեննա, 1898, 7]: Ըստ Պալյանի՝ սա անանուն մի ձեռագիր-մատյանից է քաղել-հավաքագրել, առանձնացրել է նշանները և մեկնաբանող իմաստները, այնուհետև հավելել է, որ բացի Գարեգին Սրվանձոյանցի «Թորոս աղբար»-ում հրատարակված 120 նշաններից, Ի. Հարությունյանցի ուսումնասիրությունից և Տաշյանի մատենախոսական հոդվածից այլ ուսումնասիրողների չի հանդիպել:

Տաշյանը, իր մատենախոսական հոդվածի համար, հիմք է դարձրել Ի. Հարությունյանցի գիրքը՝ «Հայոց գիրը» խորագրով, որի մասին արդեն խոսել ենք: Տաշյանը ուշադրություն է դարձրել այն փաստին, որ հեղինակը կարծում է՝ նախքան մաշտոցյան այբուբենը եղել են նշանագրեր, որոնք ժամանակի ընթացքում մոռացության են տրվել: Բացի այդ ուսումնասիրողները բաժանվում են երկու խմբի. մի մասը կարծում է, որ Մաշտոցը գրերը ստեղծել է հիմք ընդունելով հունական այբբենարանը, իսկ մյուս խումբը այն կարծիքին է, որ հայոց գրերը ունեն սեմական ծագում [ՀՅՏ (Տաշեան), Մատենախոսական քանի մը հրատարակութիւնք, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1893, մարտ, 89]: Այս տեսակետին առավել հակված է Մյուլլերը, ով կարծում է, որ ոչ միայն հայոց գրերն ունեն սեմական ծագում, այլ՝ նաև հունականը, ուստի չունենալով ոչ մի հնագույն գրանմուշ համեմատության համար, Մյուլլերի տեսակետը դժվար է ապացուցել [ՀՅՏ (Տաշեան), տե՛ս նույն տեղում]:

Հաջորդ ուսումնասիրողներն են Անտոնյան միաբանության հոգևորականներ Շ. Բսահակը և Վ. Սրապեանը: Նրանք Օրթաքեոյ գյուղի Մատենադարանի վանքում գտել էին 14-րդ դարի ձեռագիր, որի մեջ կա 112 նշանագիր [Շ. Բսահակ, Վ. Սրապեան, Հնագրական. հին նշանաձևեր, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1902, հուլիս, 202-203]: Եվ նշում են. «Նմանօրինակ նշանագրերու աւելի ճոխ հաւաքածոյ մը կը գտնենք ողբացեալ Սրվանձտեանց Թորոս Աղբար գրքին մ տալեալ Կ.

Պոլիս 1879 հետեւեալ վերնագրով «Տիգրանակերտու ձեռագիրներէն առնելով հայոց նշանագիրներէն մաս մը կը դնենք հոս» [Հ. Բսահակ, Վ. Սրապեան, տե՛ս նույն տեղում]:

Հիշարժան է նաև Ֆրէդէրիք Մուրատի ուսումնասիրությունը, որը անցկացրել է Բեռլինի արքունական մատենադարանում: Հեղինակը գտել է 505 նշան և բացատրում է, որ դրանք կարող են գրված լինել և ուղղահայաց և հորիզոնական: Նշաններից, որոշները կա՛մ պակասում են, կա՛մ եղծեալ են [Ֆրէդէրիք Մուրատ, Պատմութիւն հայերէն լեզուի, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1903, մայիս, 144-146]:

Հաջորդ ուսումնասիրությունը իրականացրել է Աճառյանը: Աճառյանը մանաբանական քննության-վերլուծության է ենթարկել իրեն նախորդող բոլոր վերոգրյալ գիտնականների հետազոտությունները, և Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց»-ը, որից հետո մի քանի տեսակետով իր կարծիքն է հայտնել, այն է՝

- ✓ Անպատճառ դպիրները բառ առ բառ չէին գրի Ագաթանգեղոսի կարծիքը:
- ✓ Ագաթանգեղոսը ցույց է տալիս, որ բացի հունարենից և հռոմայերենից գիտեր նաև հայերեն գրերը:

Բոլոր պատմագիրները, նշանագիր բառը գործածել են, գիր կամ տառ իմաստով [Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, 410]:

Ըստ Աճառյանի՝ նշանագիրը արտահայտում է տառ կամ գիր և կապ չունի մեր նշանագրերի հետ:

Աճառյանի հավաքագրած նշանագրերը թվով 509-ն են. որոնք բաժանել է 4 խմբի.

- Առաջին խումբը ընդգրկում է 332 նշան, ըստ Աճառյանի, առաջացել են կա՛մ զանազան տառաձևերից, կա՛մ պարզ և փակագիր համառոտագրություններից:
- Երկրորդ խումբը ընդգրկում է 32 նշան. դրանք միայն պատերագրեր են, այսինքն՝ ամբողջությամբ ներկայացնում են առարկայի ամբողջական պատկերը: Այս 32 նշանները Աճառյանը իր ցուցակում առանձնացրել է «+» նշանով:
- Երրորդ խումբը փոխառված նշաններն են, որոնց թիվը Աճառյանի ցուցակում կազմում է 21 և առանձնացված է «-» նշանով:
- Չորրորդ խումբը թվով 124-ն է. այս նշանները անհայտ ծագման են և Աճառյանի ցուցակում առանձնացված են «*» նշանով: Այսինքն՝ հնարավոր է, որ կարող են լինել պատկերագրեր կամ փոխառված նշաններ [Հ. Աճառյան, նույն տեղում, 426-427]:

Աճառյանը այն կարծիքին է, որ թե՛ պատկերագրերը, թե՛ համառոտագրերը առաջացել են հետմաշտոցյան ժամանակաշրջանում:

Առավել խորաքնին ուսումնասիրություն է անցկացրել Ա. Աբրահամյանը:

Օրինակ՝ Աբրահամյանը ուշադրություն դարձրեց այն փաստին, որ Նշանագիրք իմաստնոց ցանկերով ձեռագրերը հիմնականում գրվել են Կիլիկիայի և Երզնկայի դպրոցների կենտրոններում, այսինքն՝ մի ուսումնասիրություն, որի վրա չէր կենտրոնացել Աճառյանը [Ա. Աբրահամյան, Հայ գիր և գրչություն, Երևան, 1973, 204]:

Ներկայացնենք Կիլիկիայի և Երզնկայի նշանագրերի օրինակները ըստ Աբրահամյանի [Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959]:

Կիլիկիայի նշանագրերի օրինակները [Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959]:

1. Տվյալ բառի սկզբնատառի վրան կամ կողքից ավելացվում է նշան^օ

Բ—Բարթողիմէոս	Պ—Պետրոս
Գ—Գէորգ	Յ—Յովհաննէս
Զ—Զաքարիա	Տ—Տրդատ
Թ—Թէոդորա	Դ—Դահեկան և ալլն

2. Որոշ դեպքերում վերցվում է ոչ թե սկզբնատառը, այլ միջին բնորոշող տառերից մեկն ու մեկը կամ՝ վերջինը. և աջից ավելացվում է նշանը ^օ

Հ—Աբրահամ	ա—Թագաւոր
Ր—Աղեքսանդր	զ—Քարոզ
Ո—Անտոն	ք—զարմանք
Ջ—Երջանիկ	ղ—հերձուածող և ալլն

3. Պատվագրության ժամանակ հապավվում են բառի առաջին և վերջին տառերը.

բթ—բարեգութ	փգ—փափագ
Գտ—Գալուստ	քծ—քարկոծ
զն—զարուն	Ղո—Ղովտ
Զլ—Զօրաբարել	պտ—պատրաստ և ալլն:

4. Հապավման ժամանակ բառի առաջին և վերջին տառերին միանում է մեջտեղի տառերից մեկը.

բւր—բռնաւոր	հպզ—հանապազ
զլն—զերազոլն	մհտ—մահապարտ
դւր—դատաւոր	մդր—մարդասեր
զւր—զինւոր	լմն—լանդիման և ալլն:

5. Հապավման ժամանակ որպես նշանագրի նախատառ է վերցվում ո՛չ թե բառի առաջին տառը, այլ միջին տառերից.

րն—Ահարոն	ղի—աղաւնի
ղղ—աղաղակ	ղթ—աղօթք
ւծ—առիւծ	մթ—ամօթ
պշ—ապաշխարող	նթ—անօթի և ալլն:

6. Հապավվում է կապգրով.

ԻԷ	— բարեպաշտ	ՀԻ	— հանճար
ԳԷ	— գալթակղել	ՀՐ	— հմուտ
ԳԼ	— զինւոր	ՀԿ	— հպարտ
ԹԷ	— կաթողիկոս	ՆԿ	— նահատակ և ակն.

7. Կապգրված հապավվում են և այնպիսի բառեր որոնք շատ նմանություն ունեն.

ԷՆ	(նն) — նախան	ԴԴ	(դդ) — անդունդ
ՔԳ	(քք) — քաղցր	ԺԼ	(ծլ) — ծառալ.
ՆԶ	(ւչր) — մշտնջենաւոր	ՎՅ	(վսն) — վասն ակտրիկ
ՅՆ	(մն) — մովնան	ԶԷ	(չր) — շուր և ակն:

8. Ըստ Աբրահամյանի հետևյալ 15 նշանագրերը նույնպես համարվում են Կիլիկյան.

Ճ	— աղանդ	Պ	— անասուարհ
Ե	— լենտիոթ	Ց	— մարդ
Ը	— արեգակ	Պ	— յանդուգն
Ե	— անտարան	Ց	— յալիշտակել
Ը	— եկեղեցի	Պ	— սլաշծառ
Ճ	— հրեշտակ	Պ	— սատանայ
Ե	— զամբար	Պ	— փարաւոն ²¹
Ե	— քաղաք		

Երգնկայի նշանագրերի խմբում գիտության համար բացառիկ արժեք են ներկայացնում գործածված ավելի քան 180 գաղափարագրեր, որոնք մի քանի տեսակի են բաժանվում.

9. Այս գաղափարագրերի մի մասը առարկայի պարզ պատկերն է.

Ս	— լուսին	Օ	— մատանի
Ս	— խորան	Մ	— դաւազան
Ս	— տապանակ	Ս	— վիշապ
Ս	— լոնք	Ս	— նետ
Օ	— լեզու	Օ	— պտուղ
+	— խաչ	Ս	— աստիճան և ակն

10. Գաղափարագրերի մի այլ մասը արտահայտում է տվյալ բառի բնորոշ իմաստը.

	—ազբիւր—կլոր մի կետ, որից սկիզբ է առնում և հոսում ջուրը.
	—փառասեւ—իրար վրա բարձրացող օղակներ.
	—առժաբասէր—բերանը ըաց արած մեծ քսակ.
	—մեղաւուր—գլուխ՝ կարիճի ճանկերով.
	—կեղծաւուր—լեզու, որ երկու մասի է բաժանված.
	—բաղաւ—պարիսպով շրջափակված տարածություն.
	—գաբուն—գարնան սիմվոլ հանդիսացող թռչուններ.
	—առաւօտ—արեղակի և լուսնի միջին տարածությունը.
	—աւսպառ—կլոր գիծ.
	—ճեքանոս—տառար, որի ձախատն ուղղված է արևմուտքի

11. Կան նաև այնպիսի նշանագրեր, որոնք դժվար է իմաստավորել.

	—պատնառ		—հաւասար
	—ահաւասիկ		—խոնարհ
	—կոապաշտ		—թարգման
	—արեւելք		—գլթած

և այլն

Մասնավորապես, Աբրահամյանը ցույց տվեց, որ ներկայացված 200-300 նշանագրերը ոչ մի առնչություն չունեն մաշտոցյան տառաձևերի հետ, փոխարենը՝ զուգահեռներ ունեն նախամաշտոցյան դարաշրջանի, ինչպես նաև հայաստանյան, այնպես էլ օտար հիերոգլիֆիկ համակարգերի հետ:


Արդի ժամանակաշրջանում նշանագիրք իմաստոցի ուսումնասիրությունը կարոտ է լիարժեք ուսումնասիրության: Հիմնական աշխատանքները սահմանափակվել են Հ. Աճառյանի ու Ա. Աբրահամյանի ուսումնասիրություններով:

Այս ուսումնասիրությամբ ըստ ժամանակագրության ներկայացրեցինք նշանագիրք իմաստոց ցանկի մասին ունեցած տեղեկությունների, ուսումնասիրությունների և հետազոտությունների ընդհանուր պատկերը: Չի բացառվում, որ նշանագրերը կիրառվել են, որպես գաղտնագրեր կամ հավանական է, որ ազգամիջյան շփումների հետևանքով եղել են փոխառություններ, ինչու չէ, ժայռապատկերները նույնպես կարող են լինել նշանագրերի նախատիպ:

Մակայն Մաշտոցի անվան Մատենադարանում մեր կատարած ուսումնասիրության ընթացքում նկատեցինք, որ կան ձեռագրեր, որոնցում նշանագրերը սկսվում են Աբրահամ և Աստված նշաններով:


Աբրահամ նշանագրով սկսվող նշանագրերի շարքը մեզ հուշում է, կարծես, որ նշանագրերից շատերը առաջացել են նախամաշտոցյան ժամանակաշրջանում, իսկ մնացած նշանագրերը, որոնք վերաբերում են քրիստոնեական ժամանակաշրջանին, այդ նշանագրերը առաջացել են հետմաշտոցյան ժամանակաշրջանում:

Մեր հետազոտական աշխատանքի համար նախատեսված ձեռագրերից ամենահինը № 715 ձեռագիր մատյանն է. այն ժողովածու է՝ բաղկացած 5 տարբեր ձեռագրերից. ձեռագիր Ա-13-րդ դարի ձեռագիր է, ձեռագիր Բ-ն՝ 12-13-րդ դար, ձեռագիր Գ-ն՝ 13-րդ դար, ձեռագիր Դ-ն՝ 17-րդ դար, ձեռագիր Ե-ն՝ 17-րդ դար (1645թ.): Մեր կողմից ուսումնասիրվող նշանագրերի ցանկը զետեղված է ձեռագիր մատյանի ժողովածուի Գ ձեռագրում, որոնք սկսվում են Աբրահամ բառով:



Նկար 1, Նշանագրեր, ՄՄ 715, 150ր

Իսկ Աստված բառով սկսվող ձեռագիր մատյանից ամենահինը № 5118-ն է, որը 1412 թվականի է և սկսվում է Աստված բառով:



Նկար 2, Նշանագրեր, ՄՄ 5118, 378ր

Նշանագրերի համակարգը ցույց է տալիս, որ հին ժամանակներից մարդկային հասարակությունը հասկանում էր իր աշխարհընկալման կարգը և ապրելակերպը՝ արտահայտելով դրանք գրաֆիկական կամ գրանշանների միջոցով:

Նշանագիրք իմաստնոցը ոչ միայն եղել է հաղորդակցության հիմնական միջոց, այլև ունեցել է մոգության ու կրոնական արարողություններում կիրառվող գիր, օրինակ՝ պաշտամունքային գրություններում, Աստվածների կամ կուռքերի, ծիսական արարողությունների հետ կապված և այլն:

Հավանական է՝ պատմաքաղաքական իրադարձություններից ելնելով կամ քաղաքակրթության զարգացման ընթացքի նոր փուլ սկսելու հետ պայմանավորված՝ դրանք իրենց տեղը «գիջեցին» Մեսրոպ Մաշտոցի այբուբենին, սակայն շարունակում էին մնալ հայկական պատմամշակույթում՝ որպես կարևոր ժառանգության մասնիկ: Մեր հոդվածի ուսումնասիրության ընթացքում նվազագույն օրինակներով ներկայացրեցինք նշանագրերի պատկերներ, որոնք ցույց են տալիս մարդու զարգացման պատմությունը՝ ոչ միայն որպես հաղորդակցման միջոց, այլ նաև որպես աշխարհի մասին գաղափարների պարզապանում: Մարդու ինքնության մասին վկայող այդ նշանագրերը՝ միևնույն ժամանակ, բացահայտում են ազգամիջյան շփումներն ու մշակութային, կրոնական զարգացման ուղիները, որոնք ձևավորել են առավել հստակ և յուրաքանչյուր ազգի համար դարձել սեփական մտածելակերպ: Անշուշտ, կան բազմաթիվ բացեր, որոնք վերաբերում են նշանագրերի կապի և աշխարհի քաղաքակրթության զարգացման պատմության տարբեր փուլերին:

Այսպիսով, հայերեն նշանագրության պատմությունը մեզ փոխանցում է ինքնատիպ գրանշանային ժառանգության հարստություն՝ հասկանալու համար, թե ինչպես մի ժամանակաշրջանի խորհրդանշական ու գրաֆիկական գործիքները եղել են ժողովուրդների մեջ հաղորդակցման կամ ծիսակատարման միջոցներ, իսկ հետագայում դարձել են ազգամիջյան շփումների, մշակույթի և պատմության համար կապող օղակ:

Գրականության ցանկ

- Aghayan E.**, Lezvabanut'yan neratsut'yun, Yerevan, 2010.
- Mkhit'ar Sebastats'i**, K'erakanut'iwn grabarri lezui haykazean serri, Venetik, 1730.
- Ch'amch'yants' M.**, Hayots' patmut'yun, A ht., Yerevan, 1985.
- Srvandzteants' G.**, T'voros aghbar, K. Polis, 1879.
- Émin M.**, Issledovaniâ, vypusk II, Moskva, 1896.
- Agat'angegheay**, Patmut'iwn hayots', Venetik.
- Agat'angegheay**, Patmut'iwn hayots', Yerevan, 1983. 8. I. Yarut'iwneants', Hayots' giry, T'iflis, 1892.
- Palean T.**, Nshanagirk' hayots', Viyenna, 1898.
- HYT (Tashean), Matenakhosakan k'ani my hratarakut'iwnk', Handes amsoreay, Viyenna, 1893.
- Isahak H., Srapean V.**, Hnagrakan. hin nshanadzever, Handes amsoreay, Viyenna, 1902, hulis.
- Freterik' M.**, Patmut'iwn hayeren lezui, Handes amsoreay, Viyenna, 1903, mayis.
- Freterik' M.**, Nshanagirk' imastnots', Handes amsoreay, Viyenna, 1903, noyember.
- Acharryan H.**, Hayots' grery, Yerevan, 1984.
- Abrahamyan A.**, Hay gir yev grch'ut'yun, Yerevan, 1973.
- Abrahamyan A.**, Hay gri yev grch'ut'yan patmut'yun, Yerevan, 1959.